# ՆՊԱՏԱԿ ԱԼԵԿՈԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**(ՄԱՏ. 7:24-27, ՄԱՏ. 5:45)**

## ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

**G417-anemos - ἄνεμος, - Անիմաս**

- wind, a violent agitation and stream of air
- a very strong tempestuous wind
- It occurs 31 times in 29 verses in the Greek concordance of the KJV

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

**(Մատ. 7:24-27)**

Արդ՝ ամեն ով որ իմ այս խօսքերը **լսում է** եւ նորանց **կատարում**, կնմանացնեմ նորան մի
իմաստուն մարդի որ իր տունը շինեց ժայռի վերայ: 25 Եւ անձրեւն էլ եկաւ, գետերն էլ
վարարեցին, քամիներն էլ փչեցին եւ այն տանը զարկեցին, եւ նա չկործանվեց. **որովհետեւ
ժայռի վերայ հաստատուած էր:** 26 Եւ ամեն ով որ իմ այս խօսքերը լսում է եւ նորանց **չէ
կատարում**, նա կնմանուի մի անխելք մարդի՝ որ իր տունը շինեց ավազի վերայ: 27 Եւ
անձրեւն էլ եկաւ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին, եւ այն տանը զարկեցին, եւ
նա կործանվեց, եւ նորա կործանումը մեծ էր:

Մատ. 5:45 - որովհետեւ նա իր արեգակը ծագեցնում է չարերի եւ բարիների վերայ, եւ անձրեւ է բերում արդարների եւ անիրաւների վերայ:

## 1. ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՄԵԶ ՄՈՏԵՑՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԿԱՆՉԻՆ (ՀՈՎՆ. 1) TRIALS BRINGS US CLOSER TO OUR CALLING

- *Հովն. 1:2-4 - Եւ Տիրոջ խօսքը եղաւ Ամաթիի որդի Հովնանին ասելով. Վեր կաց **գնա**
  *Նինուէ մեծ քաղաքը, եւ քարոզիր նորա դէմ. որովհետեւ նորանց չարութիւնը վեր է եկել*
  *իմ առաջին: 3 **Բայց Հովնանը վեր կացաւ, որ Տիրոջ երեսից (ներկայությունից)**
  ***Թարսիս փախչի,** եւ իջաւ Հոպպէ եւ մի նաւ գտաւ որ Թարսիս էր գնում, եւ նորա*
  *վարձքը տուաւ, ու նորա մէջն իջաւ, **որ նորանց հետ Թարսիս գնար Տիրոջ երեսիցը***
  ***(ներկայությունից):** 4 Եւ Տէրը մի մեծ քամի հանեց ծովի վերա, եւ մեծ փոթորիկ եղաւ*
  *ծովում, եւ նավը ուզում էր փշրուի: 14 ...Եւ նորանք աղաղակեցին Եհովային եւ ասեցին.*
  *Ո՜հ, Եհովայ, աղաչում ենք, թող չ'կորչենք այս մարդի անձի պատճառով, եւ անմեղ արիւն*
  *մի դիր մեզ վերա, որովհետեւ դու, ով Եհովայ, ինչպէս որ ուզում ես՝ անում ես: 15 Եւ*
  *առան Հովնանին եւ ծովը գցեցին նորան. եւ ծովը դադարեց իր կատաղությունից:*

- *Եփ. 4:1-2,11-13 - 1 Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար կապուածս, որ այնպէս գնաք (քայլեք) ինչպէս որ կվայելէ այն կոչումին որի մէջ **կանչուեցաք**:*

1. *2 Ամեն խոնարհութիւնով - humility*
2. *հեզութիւնով - gentalnes*
3. *երկայնմտութիւնով, - patience*
4. *սիրով - love*
5. *իրար համբերելով - bearing with one another:*

- *11 Եւ նա մի քանիսին տուաւ **առաքեալներ** լինելու, մի քանիսին **մարգարէներ**, մի քանիսին **աւետարանիչներ**, մի քանիսին **հովիւներ** եւ **վարդապետներ**,*

- ***ԻՆՉԻ ՀԱՄԱՐ***
  1. *12 Սուրբերի կատարելութեան համար,*
  2. *պաշտօնի գործի համար,*
  3. *Քրիստոսի մարմնի շինութեան համար.*

- ***ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ***
  1. *13 Մինչեւ որ ամենքս հասնենք հաւատքի եւ Աստուծոյ Որդին ճանաչելու միութեանը.*
  2. *եւ կատարեալ **(զարգանում էր)** մարդ լինենք Քրիստոսի կատարեալ հասակի չափովը.*
     - *Ղուկ. 2:52 - Եւ Յիսուսը **զարգանում էր** իմաստութիւնով եւ հասակով, եւ շնորհքով՝ Աստուծոյ եւ մարդկանց մօտ:*

## 2. ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՄԵԶ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՎՍՏԱՀԵԼ ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՆ (ՄԱՐԿՈՍ. 4:35-40)
### TRIALS HELP US TO TRUST THE LORD'S PROMISES

*Մար. 4:35-40 - 35 Այդ նոյն օրը, երեկոյեան դէմ, աշակերտներին ասաց. «**եկէ՛ք անցնենք**
**ծովի միւս կողմը»:** 36 Թողնելով ժողովրդին՝ նրան իրենց հետ տարան նավակով, ինչպէս
նաեւ՝ միյուս նավակները, որ նրա հետ էին: 37 Եւ քամիի մեծ փոթորիկ էր լինում, եւ ալիքները
թափում էր նավի մէջ, մինչեւ որ համարեա արդէն լցվում էր: 38 Եւ ինքը նաւի ետի կողմումը
բարձի վերայ քնած էր. Եւ նորան զարթնեցնում են եւ ասում նորան. Վարդապետ, հոգդ չէ՞ որ
կորչում ենք: 39 Եւ նա զարթնելով **քամիին** սաստեց, եւ ասեց **ծովին**. Լռիր, պապանձվիր. Եւ
քամին դադարեց, եւ մեծ խաղաղութիւն եղաւ: 40 Եւ ասեց նորանց. Ինչու այդպէս վախկոտ
էք. **դեռեւս հաւատ չունէ՞ք:** Եւ նորանք մեծ վախով վախեցան, եւ իրար ասում էին. Սա ո՞վ է
արդեօք. Որ քամին էլ ծովն էլ հնազանդվում են սորան:*

## 3. ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՄԵԶ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ ՎԿԱՅԵԼՈՒ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ (ԳՈՐԾՔ. 27:13-26)
## TRIALS ENABLE US TO BEAR WITNESS TO THE LORD

*13 Եւ երբոր հարաւի քամին* ***մեղմօրէն փչեց,*** *կարծում էին թէ իրանց նպատակին կ՚հասնեն.*
*Եւ ճանապարհ ընկած անցնում էին Կրետէի մօտով: 14 Եւ շատ ժամանակ չէր անցել՝ որ նորա*
*վերայ մի մրրկալից հողմ ընկաւ, որ* ***Եւրակիկլոն էր*** *կոչվում: 15 Եւ երբոր նավը բռնվեց եւ*
*հողմի դէմ չ՚կարողացավ դիմանալ, բայց ընկած գնում եւ գալիս էինք: 18 Եւ երբոր մենք շատ*
*նեղութիւն էինք քաշում փոթորկից, հետեւյալ օրը բեռները ծովի մէջ էին գցում: 19 Եւ երրորդ*
*օրը մեր ձեռքովը նավի գործիքը դուրս թափեցինք: 20 Եւ երբոր շատ օրեր՝ ոչ արեւ եւ ոչ*
*աստղեր էին երեւում, եւ փոթորիկն էլ քիչ չէր որ մեզ վերա կար,* ***ապա մեր ազատուելու բոլոր հոյսը կտրուեցավ:***

### ***ԻՆՉ ԱՐԵՑ ՊՈՂՈՍԸ***

*Գործ. 27:21-26 - Եւ Պօղոսը նորանց մէջ կանգնած ասեց. Ով մարդիկ, պէտք էր ձեզ՝ ինձ լսէիք, եւ Կրետէից դուրս չ՚գայիք՝ եւ այս նեղութիւնից եւ վնասից պրծնէիք: 22 Եւ հիմա էլ խրատում եմ ձեզ՝ որ* ***սրտապինդ եղեք****. Որ ձեզանից ոչ մէկի անձին էլ վնաս չի լինի, բացի այդ նավից: 23 Որովհետեւ այս գիշեր երևաց ինձ այն Աստուծոյ հրեշտակը՝ որ ես նորանն եմ եւ որին էլ պաշտում եմ. 24 Եւ ասեց. Մի վախենար, Պօղոս. Պէտք է քեզ՝ Կայսերի առաջին կանգնես. Եւ ահա Աստուած շնորհել է քեզ այդ բոլոր քեզ հետ նավողները: 25 Սորա համար* ***սրտապինդ կացէք,*** *ով մարդիկ. որովհետեւ հաւատում եմ Աստուծուն, որ այսպէս կ՚լինի ինչպէս ինձ հետ խօսեց: 26 Բայց պէտք է մի կղզի ընկնենք:*

## Ամփոփում

*Կող. 4:10 - Բարեւ է տալիս ձեզ Արիստարքոսն՝ իմ գերութեան ընկերը, եւ Բառնաբասի եղբօր որդի Մարկոսը. որի համար պատուէր առաք, որ եթէ ձեզ մօտ գայ, ընդունիք նորան:*